ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# Հայաստանի Հանրապետության 2017թ. խոշորացվող համայնքների նկարագրություն

# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

## համայնք

## (Չարենցավան, Ալափարս, Արզական, Ֆանտան, Բջնի և Կարենիս բնակավայրեր)

Հեղինակ՝ Սարգիս Թովմասյան

Երևան – 2017

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

Չարենցավան խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում են Չարենցավան քաղաքը (համայնքի կենտրոն) և Ալափարս, Արզական, Ֆանտան, Բջնի և Կարենիս գյուղերը:

Համայնքի կազմավորումը նպատակ ունի Կոտայքի մարզի կենտրոնական գոտում կազմավորել տարաբնակեցման համակարգի նոր տեղային կենտրոն՝ քաղաքի շուրջ համախմբելով մոտակա գյուղերը, ինչը թույլ կտա դրանց բնակչության համար ապահովել հանրային ծառայությունների մատուցման ավելի բարձր մակարդակ:

Համայնքի բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 30463 մարդ, իսկ վարչական տարածքը կազմում է 24692 հա:

**Փնջի ընդհանուր նկարագիրը**

Համայնքի բնակավայրերը տեղաբաշխված են Կոտայքի մարզի կենտրոնական հատվածում՝ Հրազդան գետի միջին հոսանքին հարակից հարթավայրային, լեռնանտառային ու լեռնային գոտիներում: Գտնվում են ծովի մակերևույթից 1523մ-ից (Ալափարս) մինչև 1801մ (Ֆանտան) բարձրությունների վրա: Ըստ այդմ, ցածրադիր գոտիներում կլիման բարեխառն է, չափավոր ցամաքային, ոչ այնքան երկարատև ձմեռներով, մեղմ ամառներով, իսկ համեմատաբար բարձրադիր ու լեռնային հատվածներում՝ ցուրտ ձմեռներով ու զով ամառներով:

Եթե խորհրդային տարիներին Չարենցավանի բնակչության զբաղվածության հիմնական ուղղությունները պայմանավորված էին քաղաքում գործող բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններով (մեքենաշինություն, հաստոցաշինություն, երկաթբետոնե կառուցվածքներ, հանքային ջրերի արտադրություն, քիմիական արտադրություն և այլն), ապա ներկայումս գերիշխում են թեթև արդյունաբերությունը, առևտրի և սպասարկման ոլորտները:

Գյուղերի բնակչության զբաղվածության հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է՝ խոշոր և մանր եղջերավոր անասնապահությունը, խոզաբուծությունը, մեղվաբուծությունը, հացահատիկային և բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցումը, այգեգործությունը:

Նախկին Արզական համայնքի վարչական տարածքում է գտնվում Աղվերանի հանգստի գոտին՝ շուրջ քսանհինգ հանգստյան տներով:

Արզականի տարածքում կան մարմարի, օխրայի, խճաքարի, տիտանի հանքավայրեր: Պեռլիտներով և ավազահանքերով հարուստ է Կարենիսի շրջակայքը: Տարածաշրջանում կան նաև հանքային տաք աղբյուրներ, որոնք ունեն բուժիչ նշանակություն: Ինչպես ռեկրեացիոն ռեսուրսների, այնպես էլ պատմամշակութային հուշարձանների առկայությունը կարող են նպաստել էկոտուրզմի և մշակութային տուրիզմի զարգացմանը:

***Համայնքի փնջերի համադրում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգով» սահմանված՝ խոշոր համայնքի փեսլականի պայմանների և խոշորացման չափորոշիչների հետ***

*<u>1. Տեսլականով սահմանված՝ բավարար մարդկային ռեսուրսների պայման և խոշորացման չափորոշիչներից՝ առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոնի առկայություն.</u>*

Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն առանձնանում են բնակչության համեմատաբար մեծ թվաքանակով: Չարենցավանի բնակչությունը 2016 թ. կազմել է 20490 մարդ, ամենափոքր գյուղի՝ Կարենիսի բնակչության թիվը 852 է (Աղյուսակ 1):

Որոշ մտահոգության տեղիք է տալիս համայնքի կենտրոնի բնակչության շարժընթացի պատկերը. այն 2001-2016թ.թ. պակասել է 18 տոկոսով: Ընդհանուր առմամբ, բացառությամբ Կարենիսի, համայնքի կազմում ընդգրկվող գյուղերի բնակչության շարժընթացը ևս խնդրահարույց է, և բոլոր բնակավայրերի բնակչությունը նշված ժամանակահատվածում պակասել է 14 տոկոսով:

Բնակչության խտության ցուցանիշը խոշորացվող համայնքում մոտ է հանրապետության միջին ցուցանիշին և կազմում է 123 մարդ/քառ.կմ:

Աղյուսակ 1. Չարենցավան խոշորացվող համայնքի բնակչության շարժընթացը և խտությունը

| | Համայնք | Վարչական տարածքը /հա/ | Հաշվառված բնակչություն | | բնակչ.փոփոխութ. Տոկոս | Բնակչության խտությունը/մարդ/քառ.կմ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 2001թ. | 2016թ. | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Չարենցավան | 557 | 25039 | 20490 | 82 | 3688 |
| 2 | Ալափարս | 3279 | 2527 | 2359 | 93 | 72 |
| 3 | Արզական | 8463 | 2881 | 2848 | 99 | 34 |
| 4 | Բջնի | 6962 | 2882 | 2872 | 100 | 41 |
| 5 | Կարենիս | 893 | 813 | 852 | 105 | 95 |
| 6 | Ֆանտան | 4538 | 1079 | 1042 | 97 | 23 |
| | Ընդամ./միջին | 24692 | 35221 | 30463 | 86 | 123 |

*2. Տեսականով սահմանված՝ բավարար բնական ռեսուրսներով ապահովված լինելու պայման*

Նկատի ունենալով Չարենցավան քաղաքի արդյունաբերական ուղղվածությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նախկին համայնքի տարածքում քաղաքացիների սեփականության գյուղատնտեսական հողերը ընդամենը 1 հեկտար են, իսկ համայնքայինը՝ 46,3 հեկտար, հողային ռեսուրսների գնահատման տեսանկյունից քաղաքի ցուցանիշների ներառումը կատարվող հաշվարկներում կարող է ոչ հիմնավոր եզրակացությունների հանգեցնել, ուստի աղյուսակ 2-ում բերված են միայն նախկին գյուղական համայնքների տվյալները:

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական, հատուկ պահպանվող տարածքների, անտառային և արդյունաբերական նշանակության հողերը Չարենցավան խոշորացվող համայնքում (բացի Չարենցավան քաղաքի)

| | Համայնք | Հաշվառված բնակչություն 2016 | Գյուղատնտեսական հողեր/հա/ Քաղաքացիների սեփականություն | որից Բազմամյա տնկարկ | որից վարելահող | Համայնքի սեփականություն | Պետական սեփականություն | 1 բնակչի հաշվով Քաղաքացիների սեփականություն | 1 բնակչի հաշվով Համայնքի սեփականություն | 1 բնակչի հաշվով Ընդամենը | 1 բնակչի հաշվով պետական սեփականություն | Հատուկ պահպանվող տարածքներ | Անտառային ֆոնդի հողեր | Արդյունաբերության, ընդերքօգ. և այլ նշանակության |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | Ալափարս | 2359 | 1414,0 | 20,0 | 1160,0 | 903,6 | 308,0 | 0,60 | 0,38 | 0,98 | 0,13 | 11,1 | 163 | 53,9 |
| 2 | Արզական | 2848 | 807,8 | 20,1 | 616,0 | 940,2 | 1817,7 | 0,28 | 0,33 | 0,61 | 0,64 | 106,4 | 4236 | 75,0 |
| 3 | Բջնի | 2872 | 1342,7 | 0,0 | 1010,8 | 2571,0 | 11,0 | 0,47 | 0,90 | 1,36 | 0,00 | 4,9 | 2760 | 26,6 |
| 4 | Կարենիս | 852 | 189,4 | 0,0 | 187,5 | 404,3 | 0,0 | 0,22 | 0,47 | 0,70 | 0,00 | 1,1 | 17 | 105,9 |
| 5 | Ֆանտան | 1042 | 1197,7 | 0,0 | 806,7 | 1544,4 | 1663,4 | 1,15 | 1,48 | 2,63 | 1,60 | 4,1 | 16 | 33,7 |
| | Ընդամ./միջին | 9973 | 4952 | 40 | 3781 | 6364 | 3800 | 0,50 | 0,64 | 1,13 | 0,38 | 128 | 7192 | 295 |

Մեկ բնակչի հաշվով քաղաքացիների և համայնքային սեփականության գյուղատնտեսական հողերի ամենամեծ ծավալները նախկին Ֆանտան համայնքում են՝ համապատասխանաբար 1,15 և 1,43 հա (Աղյուսակ 2): Խոշորացվող համայնքում այդ ցուցանիշի միջին ծավալը կազմում է 1,13 հեկտար, ինչը 0,27 հեկտարով ավելի է հանրապետության միջին ցուցանիշից:

Համայնքում քիչ չեն նաև պետական սեփականության գյուղատնտեսական հողերը, որոնց ավելի քան 90 տոկոսը նախկին Արզական և Ֆանտան համայնքներում է:

Անտառային ֆոնդի հողերը նույնպես խոշորացվող համայնքում բավարար են. ավելի քան 7 հազար հեկտար (հիմնականում նախկին Արզական և Բջնի համայնքներում):

Խոշորացվող համայնքում 504 հեկտար կազմող արտադրական նշանակության հողերի 40 տոկոսից ավելին բնականաբար Չարենցավանում է: Այսուհանդերձ, խնդրահարույց է ինչպես Չարենցավանի, այնպես էլ համայնքի այլ բնակավայրերի արտադրական հողերի օգտագործման արդյունավետության մակարդակը:

*3. Համայնքների խոշորացման տեսլականով սահմանված՝ բավարար ֆինանսական ռեսուրսներ ունենալու պայման*

Չարենցավան համայնքի կազմում ընդգրկվող նախկին բոլոր համայնքներում սեփական եկամուտները մեկ բնակչի հաշվով հանրապետության միջին ցուցանիշից բարձր են: Խոշորացվող համայնքում այդ ցուցանիշը հավասար է 8,9 հազար դրամի (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Սեփական եկամուտների ծավալները Չարենցավան համայնքում

| | Համայնք | Հաշվառված բնակչութ. 2016թ. | Սեփական եկամուտ | |
|---|---|---|---|---|
| | | | 2013-2015թ.թ. տարեկան միջին /հազ.դրամ | 1 բնակչի հաշվով |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Չարենցավան | 20490 | 167771 | 8,2 |
| 2 | Ալափարս | 2359 | 21666 | 9,2 |
| 3 | Արզական | 2848 | 38550 | 13,5 |
| 4 | Բջնի | 2872 | 21263 | 7,4 |
| 5 | Կարենիս | 852 | 8690 | 10,2 |
| 6 | Ֆանտան | 1042 | 11830 | 11,4 |
| | Ընդամ./միջինը/ | 30463 | 269770 | 8,9 |

*4. Բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև տրանսպորտային կապերը և ավտոմոբիլային ճանապարհների վիճակը*

Աղյուսակ 4-ում ներկայացված է Չարենցավան համայնքում տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակի ընդհանուր պատկերը:

Բերված տվյալները ցույց են տալիս, որ համայնքի կազմում ընդգրկվող բնակավայրերից 4-ը գտնվում են համայնքի կենտրոնից բարենպաստ հասանելիության տիրույթում, 1-ը՝ սահմանափակ բարենպաստ: Ավտոճանապարհների վիճակը նույնպես բավարար է:

Աղյուսակ 4. Տրանսպորտային կապերի և ավտոճանապարհների վիճակը Չարենցավան համայնքում

| | Համայնք | Բարձրությունը ծովի մակերևույթից | հեռավորությունը համ.կենտրոնից | | Հասանելիության ցուցիչ | Ճանապարհի վիճակը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կմ | րոպե | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Չարենցավան | 1600 | 24,5* | 23 | | Բավարար |
| 2 | Ալափարս | 1523 | 6,1 | 11 | Բարենպաստ | Բավարար |
| 3 | Արզական | 1500 | 10,3 | 14 | Բարենպաստ | Բավարար |
| 4 | Բջնի | 1550 | 14,3 | 21 | Սահմ.բարենպ. | Բավարար |
| 5 | Կարենիս | 1350 | 4 | 8 | Բարենպաստ | Բավարար |
| 6 | Ֆանտան | 1801 | 4,9 | 8 | Բարենպաստ | Բավարար |

**Հեռավորությունը մարզկենտրոնից*

*5. Կրթական, առողջապահության և մշակութային ենթակառուցվածքներ*

Չարենցավանում գործում է 5 մանկապարտեզ՝ ընդհանուր առմամբ 1070 տեղով և 945 հաճախող երեխայով (Աղյուսակ 5): Դրանց մեծ մասն ունի հիմնանորոգման կարիք:

Ընթացիկ նորոգման կարիք ունեցող, 120-ական երեխայի համար նախատեսված մանկապարտեզներ ունեն Արզականը և Բջնին: Ալափարսն ունի բավարար վիճակում գտնվող, 120 տեղով (70 փաստացի երեխայով) մանկապարտեզ: Համայնքի մնացած բնակավայրերում մանկապարտեզներ չկան:

Աղյուսակ 5. Չարենցավան խոշորացվող համայնքի մանկապարտեզները

| Համայնք /բնակավայր/ | Մանկապարտեզ | | | |
|---|---|---|---|---|
| | քանակ | տեղ | երեխա | վիճակ |
| Չարենցավան | 5 | 325 | 280 | կեսը՝ հիմնանոր.կարիք |
| | | 250 | 125 | Հիմնանորոգման կարիք |
| | | 150 | 130 | կեսը՝ հիմնանոր.կարիք |
| | | 280 | 320 | Բավարար |
| | | 65 | 90 | Հիմնանորոգման կարիք |
| Ալափարս | 1 | 120 | 70 | Բավարար |
| Արզական | 1 | 120 | 65 | Ընթացիկ նորոգ.կարիք |
| Բջնի | 1 | 120 | 105 | Ընթացիկ նորոգ.կարիք |
| Կարենիս | 0 | | | |
| Ֆանտան | | | | |
| Ընդամենը | 8 | 1430 | 1185 | |

Չարենցավանում գործում է բավարար վիճակում գտնվող 5 հիմնական դպրոց (3798 տեղով և 2667 աշակերտով), ինչպես նաև ավագ դպրոց՝ նախատեսված 396 աշակերտի համար և 413 փաստացի աշակերտով (Աղյուսակ 6): Բավարար վիճակում գտնվող միջնակարգ դպրոցներ կան Ալափարսում (500 տեղ, 270 աշակերտ), Արզականում (700 տեղ, 310 աշակերտ) և Ֆանտանում (300 տեղ,151 աշակերտ): Հիմնանորոգման կարիք ունեցող միջնակարգ դպրոցներ ունեն Բջնին (650 տեղ և 280 աշակերտ) և Կարենիսը (250 տեղ և 68 աշակերտ):

Աղյուսակ 6. Չարենցավան խոշորացվող համայնքի հանրակրթական դպրոցները

| | Համայնք /բնակավայր/ | Միջնակարգ դպրոց | | | Հիմնական դպրոց | | | Ավագ դպրոց | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | տեղ | աշակ. | վիճակ | տեղ | աշակ. | վիճակ | տեղ | աշակ. | վիճակ |
| 1 | Չարենցավան | | | | 540 | 464 | Բավարար | 396 | 413 | Բավարար |
| | | | | | 840 | 760 | | | | |
| | | | | | 640 | 557 | | | | |
| | | | | | 735 | 491 | | | | |
| | | | | | 1043 | 395 | | | | |
| 2 | Ալափարս | 500 | 270 | Բավարար | | | | | | |
| 3 | Արզական | 700 | 310 | Բավարար | | | | | | |
| 4 | Բջնի | 650 | 280 | Հիմնանոր. | | | | | | |
| 5 | Կարենիս | 250 | 68 | Հիմնանոր. | | | | | | |
| 6 | Ֆանտան | 300 | 151 | Բավարար | | | | | | |
| | Ընդամենը | 2100 | 928 | | 3798 | 2667 | | 396 | 413 | |

Չարենցավանն ունի 355 աշակերտով երաժշտական դպրոց (հիմնանորոգման կարիք), բավարար վիճակում գտնվող՝ 595 աշակերտով արվեստի և 436 աշակերտով մարզադպրոց:

Մշակույթի տներ ունեն Ալափարսը (300 տեղ, ունի հիմնանորոգման կարիք), Արզականը (250 տեղ, ընթացիկ նորոգման կարիք), Բջնին (750 տեղ, հիմնանորոգման կարիք), Կարենիսը (150 տեղ, բավարար վիճակով):

Չարենցավանում գործում է 1 պոլիկլինիկա և 1 հիվանդանոց՝ 35 մահճակալով (ունեն ընթացիկ նորոգման կարիք): Ընթացիկ նորոգման կարիք ունեցող ամբուլատորիաներ ունեն Արզականն ու Ալափարսը, հիմնանորոգման կարիք ունեցող՝ Բջնին: Բավարար վիճակում գտնվող բուժկետեր ունեն Կարենիսը և Ֆանտանը:

Կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների տարածքային տեղաբաշխումը համայնքի գյուղերում ներկայացված է քարտեզի վրա:




*Հապավումներ..-Ա-Ամբուլատորիա, ԲԿ-Բուժկետ, Հ-Հիվանդանոց, ՄՏ-Մշակույթի տուն, ՄՊ-Մանկապարտեզ, ՀԴ-Հիմնական դպրոց, ՄԴ-Միջնակարգ դցրոց, ԱԴ Ավագ դպրոց, ԵԴ-Երաժշտական դպրոց, ԱՐԴ-արվեստի դպրոց, ՍԴ-Սպորտ.դպրոց*

Ընդհանուր առմամբ, խոշորացվող համայնքում կրթական, մշակութային և առողջապահական օբյեկտներով ապահովվածությունը բավարար մակարդակի վրա է, այսուհանդերձ ցանկալի է Չարենցավանում տեսանելի ապագայում իրականացնել ավագ դպրոցի ընդլայնման աշխատանքներ՝ նկատի ունենալով, որ այն ներկայումս գերբեռնված է:

Համայնքների խոշորացման չափորոշիչներով և խոշոր համայնքի տեսլականով սահմանված պահանջների ընդհանրացված գնահատականները Չարենցավան համայնքի համար ներկայացված են 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7. Չարենցավան համայնքի խոշորացման պայմանների և չափորոշիչների ամփոփ գնահատական

| | Խոշորացման պայմաններ և չափորոշիչներ | Ցուցանիշի գնահատական | Ծանոթություն |
|---|---|---|---|
| 1 | Բավարար մարդկային ռեսուրսներ և առնվազն 3000 բնակիչ ունեցող համայնքի կենտրոն | Բավարար է | |
| 2 | Բավարար բնական (հողային) ռեսուրսների առկայություն | Բավարար է նախկին գյուղական համայնքներում | |
| 3 | Ֆինանսական ռեսուրսների առկայություն | Բավարար է | |
| 4 | Տրանսպորտային կապեր | Բավարար են | |
| 5 | Ավտոճանապարհների վիճակ | Բավարար են | |
| 6 | Նախադպրոցական հիմնարկներ | Բավարար են | |
| 7 | Կրթական հաստատություններ | Բավարար են | Չարենցավանի ավագ դպրոցն ունի ընդլայնման կարիք |
| 8 | Առողջապահության օբյեկտներ | Բավարար է | Որոշ օբյեկտներ նորոգման կարիք ունեն |
| 9 | Մշակութային օբյեկտներ | Բավարար է | Որոշ օբյեկտներ նորոգման կարիք ունեն |
| 10 | Ընդհանուր սահմանի առկայություն | Առկա են | |
| 11 | Համայնքի կենտրոնի կենտրոնական դիրք | Բավարար է | |
| 12 | Բնակիչների համատեղելիություն և մենթալություն | Բավարար է | |

Այսպիսով, Չարենցավան համայնքը լիարժեքորեն բավարարում է համայնքների խոշորացման բոլոր պայմաններին:

***Չարենցավան համայնքի կազմավորումը կարող է ապահովել համայնքների խոշորացման հայեցակարգում ամրագրված հետևյալ հիմնական արդյունքները՝***

1. Մարդկային ռեսուրսների համախմբումը, ինչը թույլ կտա բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը (որակյալ կադրեր, ընդլայնված կառավարման օբյեկտ, և այլն),

2. Ենթակառուցվածքների համախմբումը, ծառայությունների մատուցման հասանելության ապահովումը և արդյունավետության բարձրացումը, ինչը թույլ կտա կենտրոնացնել բնական ռեսուրսները և դրանց կառավարումն իրականացնել մեկ կենտրոնից, մշակել և իրականացնել համայնքային քաղաքականություն, որը փոքր համայնքներից շատերում բացակայում է,

3. Միավոր ծառայության վրա կատարվող ծախսերի նվազեցումը և ծառայությունների շրջանակի ընդլայնումը,

4. Ենթակառուցվածքների, մասնավորապես, արտադրական կարողությունների, ռեկրեացիոն համակարգերի և հանգստյան տների ցանցի զարգացման և արդիականացման գծով ներդրվող գումարների ավելի նպատակային և համակարգված օգտագործումը,

5. Համապետական ծրագրերի իրականացման հնարավորությունների մեծացումը,

6. Տնտեսության ճյուղերի՝ հատկապես արդյունաբերության զարգացման համար ավելի մեծ հնարավորությունների ստեղծումը,

7. Բնական պաշարների հասանելիությունը և դրանցից օգտվելու հնարավորության ապահովումը գործնականում բոլոր բնակավայրերի բնակիչների համար:

Թվարկվածից զատ, Կոտայքի մարզի կենտրոնական հատվածում կկազմավորվի տարաբնակեցման համակարգի նոր տեղային կենտրոն, ինչը նախադրյալներ կստեղծի բնակավայրերի կայուն զարգացման և  հանրային ծառայությունների հասանելիության պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**

Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de